

Սփյուռքի մենջորդաց և ավազ սերնդի զրական-հասարակական զործունեության, ստեղծագործությունների, դասական և խորհրդրական զրականությունների հետ զարգացման առնչությունների մասին ղեկուղումներով հանդես եկան բանասիրական ղիտությունների ղուկտոր Ս. Սարիյանը (Քանդանիկ Անդրեասյանի ղրական խոհերը), բանասիրական ղիտությունների ղուկտոր Ժ. Քալանթարյանը (Քերչակ Զուպանյանը սփյուռքահայ ղրականության քննադատը), բանասիրական ղիտությունների ղուկտոր Վ. Դաբրիլյանը (ՔՄԽձ իշխանի պոհիան), բանասիրական ղիտությունների ղուկտոր Գ. Հայրյանը (Քվեթիք իսականյանը սփյուռքահայ քննադատության մեջ), Վ. Դե-

իկլյանի («Արիշանի սփյուռքահայ քննադատական մտքի ղեկավարմամբ»), րանասիրական գիտությունների թեկնածու Գ. Հակոբյանը («Համաստեղի և հայ նորավիպագրության հարցեր»), Զ. Ռեմիզյանի («Հակոբ Օշականի «Վկայություն» ինքնավերլուծական հատորը»), Լուկու Օշականի ստեղծագործական և գրականագիտական վաստակը վիճահարույց մեկնալսանությունների տեղիք է տվել ինչպես սփյուռքում, այնպես էլ մեկտնում: Խորհրդահայ րենագրատնիկի դարձագրել են արեւելահայ ու նորագույն շրջանի մի շարք գրողների նրկատմամբ նրա խստախոս կեցվածքը, անվերապա՝ մոտեցումները: Սակայն այսօր, երբ անհամեմատ մեծացել են Հ. Օշականի գրական նյութերը համակողմանիորեն ձանաչելու նորավերլուծությունները, հարկ է ընդունել նրա գրական աշխարհի ինքնատիպությունը և այն խորությամբ, նոր հիմունքներով ուսումնասիրելու արդիական պահանջը: Աշխույժ բանավեճից հետո այս կարծիքին հանգեց գիտաժողովը: Ընդհանրապես մեծ է ֆորմասահայ գրական օջախի գերը սփյուռքի միջօրեականներում, և լնական էր ուսումնողովում այդ դերի կարևորումը մի շարք գեղարվեստների մեջ, որոնցից կարելի է հիշատակել րանասիրական գիտությունների թեկնածու Ա. Ավագյանի «Շահան Շահնուրի «Վավերագրի» գրական խորհրդածությունները», լիբանանահայ գրագետ Ն. Տասնապետյանի «Նիկողոս Սարաֆյանը և սփյուռքահայ իրավիճակի պատկերը», բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Մալևսուպետյանի «Ֆրանսահայ բանաստեղծության նորահայտ լեզրից» նվիրված Հարութ Կոստանյանի ստեղծագործությանը:

Ժող Հակոբյանի ստեղծագործական ակունքը հայրենիքն է. այս հիմնագրույթն էր ընկած բանասիրական գիտությունների դոկտոր Լ. Ասմաթյանի «Հայրենասիրությունը Ժ. Հակոբյանի պոեզիայում» դեկուցման մեջ: «Ժամանակակից սփյուռքահայ պոեմի մի քանի հարցեր և Գոտիկ Աղաբաբյանի պոեմները» դեկուցման մեջ բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Գրիգորյանը լիբանանահայ բանաստեղծի ժառանգությունը տեսնում է աղղային համընդհանուր գրական նվաճումների խորքում:

Գ. Գույումջյանը անդրադարձավ «Սփյուռքահայ գրողները ուս գրականության մասին» թեմային՝ ընդգծելով, որ առայսօր մեր գրականագետները քիչ են առնչվել արևմտահայ և ուս գրական կապերին, գրեթե անտեսել են սփյուռքահայ և ուս գրական աղբյուրների հարցը: Մինչդեռ ուս գրականության նկատմամբ լրիվացող հետաքրքրություն են ցուցա-

բերել և՛ անցյալում, և՛ այսօր Ա. Չոպանյանը, Լ. Բաշալյանը, Շ. Շահնուրը, Վ. Շուշանյանը, Վ. Հակոբյանը, Մ. Մառուկյանը, Գ. Աղաբաբյանը, Վահե-Վահանը և շատ ուրիշներ:

Այս առթիվ մենք կուզենայինք շեշտած լինել սփյուռքի մտավորականության քաղաքացիական առողջ կեցվածքը. այն ժամանակ, երբ խորհրդային իշխանությունները անլուր հալածանք էին ծավալել Բ. Պաստերնակի նկատմամբ, Ե. Կոպելյանը («Պոլիս») արևմտահայերեն է թարգմանում նրա «Դոկտոր Ժիվագո» վեպը, սփյուռքում խոր հետաքրքրություն են ցուցաբերում Վ. Նաբոկովի, Ա. Սուլժենցիևի ստեղծագործությունների նկատմամբ, նշելով, որ նրանց ուս, խորհրդային գրականության ծիրից դուրս թողնելու կարող էր ձգտել միայն գրականության քաղաքականացման հետամուտ մտայնությունը:

Այսօր ամերիկահայ գրականության, մասնավորաբար արձակի բարձր նկարագիրն են կապում Ն. Ակիշյանը և Հ. Կարապետյանը, որոնց ստեղծագործությունների մասին ղեկուցումներ կարդացին Ա. Դեմիրճյանը («Ռուս պար Ակիշյանի «Գաղթականները» վեպը») և Ս. Դեղամյանը («Հայրենի հողը և աղգային պատկանելության գաղափարը Հայր Կարապետյանի ստեղծագործություններում»):

Պոլսի գրականությունը շարունակում է այն ավանդույթները, որոնք մշակվել են այժմ հեռավոր թվացող անցյալում: Ամենին պատահական չէ, որ բանասիրական գիտությունների դոկտոր Գ. Սևանը այսօրվա ստամբուլահայ պոեզիայում և արձակում տեսնում է հումանիզմի վերընթացումը: Նա իր «Մարյերգություն» նոր որակ սփյուռքահայ գրականության մեջ: Գեկուցման ղեկավար նյութը քաղել էր իրեն հոգևորապես պոլսահայ միջավայրից՝ արժեքավորելով Զահրուտի, Զարեհ խախունու, Ռուպեր Հատտեճյանի ստեղծագործությունների գաղափարական հարցադրումները: Առաջին անգամ խորհրդահայ շրջանակներում քննության առնվեց Զուլեյխե Պիպեոյանի «Մարյերգություն» վեպը (դեկուցող՝ բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Դեմիրճյան), որը նշանակալից երևույթ է ոչ միայն 80-ական թվականների, այլև ընդհանրապես հայ վեպի ժանրում: Գ. Սևանը և Ս. Դեմիրճյանը նշեցին այն ոգևորիչ պարագան, որ վերջին տասնամյակների պոլսահայ գրականությունը աչքի է ընկնում բարձրարժեք գրական նվաճումներով, հոգևոր յուրատեսակ վերելքով, որը պայմանավորող դրոժներին է «Մարմարա» օրաթերթը: Այն շուրջ քառորդ դար խմբագրում է Ռ. Հատ-



տեճյանը՝ գիտաժողովի պատվավոր հյուրը։

Երևք գեկուցում նվիրված էր օտարագիր հեղինակների ստեղծագործական վաստակին։ Շ. Վարսյանը՝ «Հայ ազգային տարրերի անդրադարձումը՝ Վ. Սարգսյանի ստեղծագործության մեջ», րանասիրական գիտությունների թեկնածու Վ. Փաբրուսյանը՝ «Եղևոնապատումը սիյուռքի օտարագիր հայ րանաստեղծության մեջ», Ա. Էմինը՝ «Անգլիագիր գրող Փիթրը նաչարյանի եռագրությունը»։ Ընդհանրապես, ե՞ մեղանում, ե՞ արասա՛մանում, րավական եռանդուն վեճարկվում է օտարագիր հեղինակների ազգային դրականության պատկանելության խրնդիրը։ Այն ծավալվում է հիմնականում Լրկու ուղղությամբ, երկու գիտանկյունով. առաջին՝ ինչի՞ մասին են գրում օտար լեզուներով, երկրորդ՝ ի՞նչ լեզվով են գրում։ Գրողը այս կամ այն գրականության փաստ է դառնում իր լեզվական աստղծով, և սա որոշիչ է բոլոր պարագաներում։ Իսկ գրողի ծագումը, նրա ստեղծագործական ազգային ոգին սոսկ պարզում են ազգային մտածողական կերպերը, միջավայրի, կերպարների «գաղափարական» լիցքը, որոնք միշտ Լրկրորդական են լեզվական մտածողության հանդեպ։ Ի՞նչարկ, այս պարագան չի րացառում օտարալեզու հեղինակների հայանապատ ներդրումը, ազգային առողջ տարրերի առկայությունը նրանց երկերում, ինչպես և գործունեության ռշարմիչ ուժը։ Այս տեսակետից ճանաչողական կարևոր նշանակություն են ձևոք բերում նրանց ստեղծագործությունների և ազգային արմանների ազերսների միահյուսված քննությունը, որիչ ժողովուրդներին մեր ժողովրդի ճշմարիտ պատմությունը ներկայացնելու առաքելությունը։

Այս, ինչպես նաև ամենատարբեր խրնդիրների շուրջ ծավալվեց մտքերի աշխույժ, շահեկան փոխանակություն, որին իրենց մասնակցությունը լերեցին արվեստագետ Պեհեհալյանը (Էանադա), Ռ. Հատունյանը (Թորքիա), Շ. Վարսյանը, Ս. Սարգսյանը, րանասիրական գիտությունների դոկտոր Ա. Եղևոնապատումը։ Գիտական նստաշրջանի եռօրյա արդյունքներն ամփոփեցին Դ. Սևանը և Էդ. Զրբաշյանը։ Նշվեց, որ գիտաժողովի բուն հաջողությունը կապված է սիյուռքահայ գրականության գիտական ճանաչման բնարուի ցանկության հետ, որ գալիս է ժամանակի հրամայականից, վերակառուցման շնչից. առաջին անգամ խորհրդահայ ամբիոններից հնչում էին նոր անուններ, որոնք առաջներում արգելված գրագետներ էին, անցանկալի դեմքեր։ Գիտաժողովը ծառայեց իր ղխավոր նպատակին՝ նշանավորելով սիյուռքահայ գրականության նկատմամբ հետաքրքրության նորագույն փուլը։ Մի կողմից հրապարակ են իջնում նորանոր գրքեր, մյուս կողմից՝ այդ գրականության նկատմամբ գիտական մոտեցումը սկսում է ստանալ «քաղաքացիություն» և կրել օրինալափ բնույթ։

Մայիսյան գիտաժողովը նրա մասնակցներին համակեց այն գիտակցությամբ, որ սիյուռքահայ գրականության հետագա ուսումնասիրությունը բնթանալու է «նույն ժողովրդի գրականությունը կարգախոսով։ Անշրջելի է այսուհետև այդ գրականության շիտակ մուտքը հայրենական գիտական աշխարհ։

Ս. Դ. ԴԱՆԻԵԼՅԱՆ